ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

17.11.2022թ. ք. Իջևան

Նախագահ՝ Ա. Մարգարյան /դեկանի ԺՊ/

Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցել են գիտական խորհրդի նախագահ Ա. Մարգարյանը, քարտուղար Ա. Ալեքսանյանը, անդամներ՝ Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Գ. Ալեքսանյանը, Ա. Սարիբեկյանը, Թ. Վարդանյանը, Պ. Ասլիբեկյանը, Գ. Ավետիսյանը, Դ. Աֆյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Թ. Ջանվելյան, Հ. Սանթրոսյանը: Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մարգարյանը:

Բաց քվեարկությամբ 13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում 5/1.-Հաստատել նիստի օրակարգը.

Օրակարգ

1. 1-ին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում /զեկ. Ա. Մարգարյան/:
2. Հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցերի քննարկման և հաստատման մասին /զեկ. Ա. Մարգարյան/:
3. 2022-2023 ուստարում նախատեսված ավարտական աշխատանքների բաշխված ցանկի հաստատում /հեռակա/ /զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:
4. Ընթացիկ հարցեր.

4.1. Հաղորդում ՀՀ Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող 21 T-1E192 ծածկագրով «Սևանա լճի և նրա ավազանի ջրային ռեսուրսների կայուն կառավարման համապարփակ պլանի մշակում» թեմայի հաշվետվություն /զեկուցող թեմայի ղեկավար Թ. Վարդանյան/:

1. ***Լսեցին.- 1-ին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփման մասին /զեկ. Ա. Մարգարյան/:***

Ա. Մարգարյանը հաղորդեց 1-ին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների մասին: Նա նշեց, որ ֆակուլտետում սովորում է 159 ուսանող, «Ֆինանսներ» ԿԾ՝ 94, «Զբոսաշրջություն» ԿԾ՝ 55: Դեկանի պաշտոնակատարը նշեց, որ 2022-23 ուստարավա 1-ին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունները և ստուգումները կազմակերպվել են առկա՝ ՈՒՄՎ կողմից սահմանված ժամկետում /ս/թ հոկտեմբերի 26-29/: Ֆակուլտետում կազմակերպվել են 28 ընթացիկ ստուգում և 19 ընթացիկ քննություն, համապատասխանաբար՝ «Ֆինանսներ» ԿԾ կուրսերում /1- 4-րդ/ 11 ընթացիկ ստուգում, 12 ընթացիկ քննություն, իսկ «Զբոսաշրջություն» ԿԾ կուրսերում /1-4-րդ/ 16 ընթացիկ ստուգում, 7 ընթացիկ քննություն: Մասնագիտական ամբիոնները նախապես հստակեցրել են ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման ձևերը և սահմանված ժամկետներում պահանջել և ստացել են հարցատոմսերն ու թեստերը:

Դեկանի պաշտոնակատարը հաղորդեց, որ ֆակուլտետում ընթացիկ քննությունների և ստուգումների ամփոփումից հետո առաջադիմությունը «Զբոսաշրջություն» ԿԾ կազմել է՝ 82%, «Ֆինանսներ» ԿԾ՝ 73%:

Արտահայտվեց.- Մ. Միքայելյանը

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.11 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Ֆակուլտետի 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. ***Լսեցին.- Հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցերի քննարկման և հաստատման մասին /Զեկ. Ա. Մարգարյան/:***

Ա. Մարգարյանը հաղորդեց, որ 1-ին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունները և ստուգումները նախատեսվում են կազմակերպել առկա ս/թ դեկտեմբերի 14-21-ը ընկած ժամանակահատվածում: Կազմվել են ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման ժամանակացույցերը ըստ կուրսերի և ըստ օրերի /ժամանակացույցերը կցվում են/: Համապատասխան մասնագիտական ամբիոնները նախապես հստակեցրել են ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման ձևերը և սահմանված ժամկետներում պահանջել են հարցատոմսերը, թեստերի նմուշները:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - Հաղորդումը հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին ընդունել ի գիտություն:

3. ***Լսեցին.- 2022-2023 ուստարում նախատեսված ավարտական աշխատանքների բաշխված ցանկի հաստատման մասին /հեռակա//Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:***

Մ. Միքայելյանը նշեց, որ հեռակա ուսուցման ավարտական կուրսերում բաշխված են ավարտական աշխատանքի թեմաները: Նա նշեց, որ ամբիոնում քննարկվել և հավանություն են տվել բացառապես ֆինանսներ մասնագիտությանը վերաբերող թեմաներին:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնն ավարտական աշխատանքի թեմաների ընտրության հարցում առաջնորդվել է իրենց կողմից որդեգրած քաղաքականությամբ: Մասնավորապես. ընտրվել են ավարտական աշխատանքների այնպիսի թեմաներ, որոնք հնարավորություն կտան ուսանողներին համապարփակ հետազոտություն իրականացնել մարզի խնդիրների վերաբերյալ:

Արտահայտվեցին.- Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդն որոշեց.

Որոշեցին – Հաստատել «Ֆինանսներ», «Զբոսաշրջություն» /հեռակա/ մասնագիտությունների 2022-2023 ուստարվա ավարտական աշխատանքների ցուցակները՝ ըստ ղեկավարների և ուսանողների:

4. Ընթացիկ հարցեր.

4.1.Լսեցին.-Հաղորդում ՀՀ Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող 21 T-1E192 ծածկագրով «Սևանա լճի և նրա ավազանի ջրային ռեսուրսների կայուն կառավարման համապարփակ պլանի մշակում» թեմայի հաշվետվություն /զեկուցող՝ թեմայի ղեկավար Թ. Վարդանյան/:

Թ. Վարդանյանը հայտնեց, որ հաշվետու ժամանակահատվածում (2021-2022թթ.) իրականացվել են պայմանագրով նախատեսված աշխատանքները՝ պլանին և առաջադրանքին համապատասխան: Զեկուցողը համապարփակ ներկայացրեց հաշվետու ժամանակաշրջանում իրականցված աշխատանքները: Թ. Վարդանյանը հետազոտությանը վերաբերող հարցերին տվեց սպառիչ պատասխաններ:

Արտահայտվեցին՝ պրոֆեսորներ Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը:

Արտահայտվողները բարձր գնահատեցին կատարված հետազոտական աշխատանքները և առաջարկեցին շարունակել հետազոտությունը:

Գիտական խորհուրդը միաձայն քվեարկությամբ հավանություն տվեց ներկայացված հաշվետվությանը:

Որոշեցին- 1. ՀՀ Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող 21 T-1E192 ծածկագրով «Սևանա լճի և նրա ավազանի ջրային ռեսուրսների կայուն կառավարման համապարփակ պլանի մշակում» թեմայով հաշվետվության հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. Երաշխավորել թեմայի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարությունը: